ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ

վերլուծական կենտրոն

ՄԶՄԿ եռամսյա
# Լրատու
թիվ 5

ԳԱՐՈՒՆ, 2011

## Տնօրենի խոսքը

*Իրադարձությունների թվացյալ անդորրի վարագույրից անդին և՛ Հայաստանը, և՛ Թուրքիան չեն դադարեցրել հայ-թուրքական հարաբերությունների ձևավորման գործընթացը: Ոչ փոխադարձ մեղադրանքները, ոչ հարձակողական նախապայմանները, ոչ էլ տարբեր խուսանավումներն ու շահարկումներն իրականում բարելավման գործընթացի մահվան ախտանիշեր չեն: Դրանք ավելի շուտ պարզորոշ ազդանշաններ են, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավումն իրականում երկու երկրների իշխանությունների քաղաքական օրակարգերի գերակայություն է: Այդուհանդերձ, փոխադարձ շփման ուղղակի գործընթացն անկասկած փոխակերպվել է՝ ընդունելով այլ ձևեր և դրսևորումներ, որոնք մատնանշում են բավականին կենսունակ գործընթացի առկայությունը: Ստորագրելով արձանագրությունները՝ կողմերը, միջնորդներն ու գործընթացի աջակիցները բացեցին Պանդորայի արկղը՝ քաղաքական գործընթացը, ընդհանուր առմամբ, անշրջելի դարձնելով: Ավելին, Ցյուրիխից հետո հայ-թուրքական հարաբերությունների խնդիրը մտավ միջազգային քաղաքականության օրակարգ, դառնալով դրա անքակտելի մաս, հատկապես ԱՄՆ և մասնավորապես Բարաք Օբամայի և Հիլարի Քլինթոնի անձնական ջանքերի շնորհիվ: Զարմանալի չէ, որ 2011թ. մայիսի 19-ին ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ֆիլիպ Գորդոնը նշեց, թե ԱՄՆ-ն շարունակելու է խրախուսել հայ-թուրքական հարաբերությունների բարելավման ջանքերը: Աջակցությունը երկու պետությունների միջև երկխոսությանը միանգամայն անհրաժեշտ էր երկու տարի առաջ, սակայն այն մնում առավել քան անհրաժեշտ այժմ, երբ գործընթացն ինքնին կտրուկ այլակերպվում է և շարունակելու է փոխակերպվել նաև հետագայում:*

*Ակնհայտորեն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների զարգացման ներկա փուլում թե՛ ուղղակի, թե՛ միջնորդավորված շփումները Հայաստանի և Թուրքիայի որոշումներ ձևավորողների միջև զգալիորեն սահմանափակվել են երկու երկրների ղեկավարների կողմից: Նման գնահատականը կարող է որոշ շահառուների ստիպել եզրակացնել, թե աջակցությունը երկխոսությանն իրականում հնարավոր չէ: Սակայն, նման ենթադրությունն ըստ էության սխալ է և չի համապատասխանում զարգացումների ներկա ընթացքին առնվազն երկու պատճառով: Նախ, նման մոտեցումը կարող է ապակողմնորոշել հիմնական շահառուներին ծառայելով որպես թյուր ազդակ: Այն կարող է ընկալվել որպես քաղաքական գործընթացի ներկա փոխակերպումների, դրա հետագա զարգացման հնարավորությունների և այդ գործընթացի ամրապնդմանը միտված կարիքների սխալական գնահատական: Նման հետևանքը միանգամայն հավանական է, իսկ դրա վնասակար ազդեցությունը՝ վճռորոշ:*

*Երկրորդ, գործընթացի ներկա փոխակերպումն այնպիսի մարտահրավերներ է ստեղծում, որոնք վերոհիշյալ սահմանափակ շփման և դրանից բխող իրականության արդյունք են: Գործընթացի փոխակերպման ընթացիկ փուլում նշված մարտահրավերներին դիմակայելն առավել կարևոր և անհրաժեշտ է, քան երբևէ, անգամ այն օրերի համեմատությամբ, որոնք բնութագրվում էին «հարաբերությունների բարելավման գործընթացի դինամիկ միջավայրի առկայությամբ, ինչը թույլ էր տալիս միջամտության համար բացել կենսունակ հնարավորությունների դուռը»:*

*Այսպիսով, որո՞նք են հայ-թուրքական հարաբերությունների բարելավման քաղաքական գործընթացի այն վճռորոշ մարտահրավերները, որոնք բխում են որոշումներ և քաղաքականություն ձևավորող առանցքային դերակատարների միջև թե՛ ուղղակի, թե՛ միջնորդավորված շփումների երկկողմանի սահմանափակման արդյունքում:*

*Նախ, նոր իրականության մեջ որոշումներ և քաղաքականություն ձևավորող դերակատարները գրեթե զրկված են փոխադարձ շահերի, օգուտների, հարաբերությունների բարելավման մանրամասների ու առանձնահատկությունների մասին խոր գիտելիքներ ստանալու հնարավորությունից: Նրանք գրեթե ոչ մի հնարավորություն չունեն այլևս սովորելու, հասկանալու և կիրառելու նման գործնական և կարևոր գիտելիքները: Քաղաքական գործընթացի վերջին փոխակերպումից առաջ քաղաքականություն ձևավորողները հնարավորություն ունեին նման խորը գիտելիքներ ձեռք բերել հիմնականում արդյունավետ հաղորդակցման, շփման և փոխադարձ ուսուցման արդյունքում: Վերջին փոխակերպումները փակեցին հաղորդակցության ուղիները և փոխադարձ ուսուցումը դարձրեցին գրեթե անհնարին: «Սովորելը բացառող» ներկա իրականությունը կարող է հանգեցնել մերձեցման գործընթացի անցանկալի փոխակերպումների, որոնց արդյունքում երկու կողմերն էլ կներքաշվեն բավականին մակերեսային և պոպուլիստական քաղաքական գործընթացի մեջ:*

*Գործընթացի վաղ փուլում՝ «բարենպաստ ու դինամիկ ժամանակներում» բարելավման գործընթացն ու դրա հաջողությունն ընկալվում էին հիմնականում որպես քաղաքական կամքի ածանցյալ: Մինչդեռ արդյունավետ գործընթացի մանրամասները, ինչպես օրինակ առանձին ոլորտներում կողմերի մտահոգությունները, հիմնավորված քաղաքականության ձևավորման գործընթացը, ծուղակները, ուր կարող էր հայտնվել բարելավման գործընթացը տեխնիկապես և քաղաքականապես, քաղաքականության վերաբերյալ հետազոտություններն ու վերլուծությունները, մերձեցման խթանման գործում արդյունավետ հաղորդակցության մեխանիզմները, մասնակցային գործընթացի ձևավորումն ու աջակիցների բանակն ընդլայնելու հնարավորությունը հազիվ թե կարևորվեցին հավուր պատշաճի:*

*Հարաբերությունների բարելավման գործընթացի ներկա փուլում, երբ միայն քաղաքական կամքն այլևս բավարար չէ մերձեցումն իմաստալից ու ապահով հանգրվանի հասցնելու համար, այս մանրամասներն իրավամբ անհրաժեշտ են քաղաքական գործընթացին օժանդակելու և այն ինքնաբերական շրջադարձի վտանգներից զերծ պահելու և պոպուլիստական երկարատև սցենարից խուսափելու համար: Նման եզրահանգման ճշմարտացիությունն ապացուցվել է ուղղակիորեն և անուղղակիորեն ՄԶՄԿ կողմից Հայաստանում և Թուրքիայում կազմակերպված հանրային քննարկումների արդյունքում: Սահմանափակ շփումն ու փոխադարձ ուսուցման թերի գործընթացը կտրուկ սահմանափակում են որոշումներ ձևավորող առանցքային դերակատարների հնարավորությունները հնարավորինս հղկելու վերոհիշյալ մանրամասները:*

*Ըստ էության, Պանդորայի արկղը բացելուց հետո, երբ իրականում հիմնական շահառուները չէին տիրապետում գործընթացն արդյունավետորեն վերահսկելու և կառավարելու համար անհրաժեշտ գործիքակազմին, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ արկղն ամենայն հավանականությամբ երբևէ փակել չի հաջողվի, իսկ դրա արդյունքում առաջացած մարտահրավերներն ինքնաբերաբար չեն անհետանա, կողմերը խիստ կարիք ունեն ձեռք բերելու այնպիսի գործիքներ, որոնք թույլ կտան դյուրացնել փոխադարձ ուսուցման գործընթացը, քանզի դա այս փուլում երկխոսության մեխն է: Ներկա փուլում նման ուսուցողական գործընթացը որոշ չափով նաև հենց այն միջավայրն է, որն ապահովելու է այդ երկխոսությունը: Ուսուցողական մեխանիզմների ձևավորումը զգալիորեն կբարելավի երկխոսության միջավայրը և կաջակցի քաղաքական գործընթացի հետագա արդյունավետ փոխակերպմանը:*

***Թևան Պողոսյան***
***Գործադիր տնօրեն***

ՄԶՄԿ Լրատուն հրապարակվում է 2010թ. ապրիլից: Լրատուն նպատակ ունի բարելավելու մեր հաղորդակցությունը Հայաստանում և տարածաշրջանում քաղաքացիական հասարակության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև զարգացմանն աջակցող կառույցների՝ մեր գործընկերների հետ: Հուսով ենք, որ Լրատուն օգտակար կլինի Ձեզ համար, հնարավորություն կընձեռի տեղեկանալ մեր ընթացիկ աշխատանքին, կներկայացնի մեզ ու մեր գործունեությունը:

# Ծրագրերի ընտրանի

## Աջակցություն միգրացիայի կառավարման ծրագրի մշակմանը

ՄԶՄԿ-ն տեղական և միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ առաքելություն Հայաստանում, ՄԱԿ-ի փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակ, Մարդը կարիքի մեջ, Տարածքային կառավարման նախարարության Միգրացիայի պետական ծառայություն) հետ համագործակցությամբ 2011թ. փետրվարից օժանդակում է ՀՀ Կառավարությանը Միգրացիայի կառավարման քաղաքականության հայեցակարգի Ազգային գործողությունների ծրագրի (ԱԳԾ) մշակման աշխատանքներում:

Փետրվարի 15-ին ՄԶՄԿ փորձագետների թիմի և Միգրացիայի պետական ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ Ազգային գործողությունների ծրագրի առաջին քննարկումը:

## Աջակցություն հայրենադարձներին

2010թ. հուլիսից Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը Նիդերլանդների Թագավորության Արդարադատության նախարարության (ՆԹԱՆ) Հայրենադարձության և վերադարձի ծառայության հետ համագործակցությամբ իրականացնում է մի ծրագիր, որի նպատակն է վերաինտեգրմանն ուղղված աջակցություն տրամադրել Նիդերլանդների Թագավորությունից կամավոր կամ հարկադրաբար վերադարձող Հայաստանի քաղաքացիներին: Ծրագիրը հովանավորվում է ԵՄ կողմից:

2011թ. առաջին եռամսյակի ընթացքում ծրագրի շրջանակներում երկու քաղաքացիներ վերադարձել են Հայաստան, և նրանց տրամադրվել է ծրագրով նախատեսված աջակցություն:

## Ժողովրդագրական քաղաքականության համապատասխանությունը պետբյուջեին

ՄԶՄԿ փորձագետները հետազոտել են ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված ծրագրերի և դրանցում հռչակված նպատակների և նախանշված ֆինանսական ու ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշների համապատասխանությունը ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության փաստաթղթով ամրագրված դրույթների հետ:

## Աջակցություն կին փախստականներին

ՄԶՄԿ-ն շարունակում է ակտիվորեն խրախուսել, որպեսզի գենդերային խնդիրներն անդրադարձ գտնեն քաղաքականության մշակման գործընթացում, և այդ նպատակով փետրվարի 17-ին ՄԶՄԿ ներկայացուցիչները հանդիպեցին ՄԱԿ ՓԳՀ Ծրագրերի բաժնի ղեկավար Ալեսսանդրո Նոբիլին և Օպերատիվ հարցերով պատասխանատու Ռոզա Մինասյանին:

ՄԶՄԿ-ն հարցազրույցներ անցկացրեց Տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն պետական ծառայության աշխատակիցների, փախստականների հարցերով ակտիվ տեղական ՀԿ-ների ներկայացուցիչների, փախստական կանանց, փախստական կանանց խմբերի հետ գենդերային հավասարության և գենդերային բռնության դասընթացներ իրականացնող վերապատրաստողների, Հայաստանում գենդերային բռնության դեմ պայքարի Կոնսորցիումի անդամ կազմակերպությունների և ՄԱԿ-ի Փախստականների հիմնադրամի ներկայացուցիչների շրջանում: Անհատական և խմբային հարցազրույցներ անցկացվեցին փախստականների կազմակերպությունների՝ «Միասնություն», «Ծիծեռնակ», «Ահազանգ» ՀԿ-ների և «Ազարիան» փախստականների միության ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մարտ ամսին կազմակերպվեց կլոր սեղան Գյումրիի գործընկերների հետ:

## Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման խթանում

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը և Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման վերաբերյալ համագործակցության հուշագիր ստորագրած Կոնսորցիումի անդամները տարածաշրջանում խաղաղություն և տնտեսական ինտեգրում խթանելու նպատակով աջակցում են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մերձեցմանը՝ զարգացնելով քաղաքացիական հասարակության խմբերի միջև համագործակցությունը, խրախուսելով տարածաշրջանային գործարար և մասնագիտական ցանցերի ստեղծումն ու զարգացումը և աջակցելով երկու ժողովուրդների միջև փոխըմբռնման հաստատման ջանքերին:

Պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կառույցների և վերլուծական կենտրոնների, գործարար համայնքի և զարգացման գործընկերների երեսուն գործիչներ ՄԶՄԿ հրավերով հունվարի 25-ին մասնակցեցին «Հայ-թուրքական հարաբերություններ. հնարավորության պատուհանները» առանց հողումների քննարկմանը:

Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման վերաբերյալ համագործակցության հուշագիրն ստորագրած չորս կազմակերպությունների՝ Եվրասիա համագործակցության հիմնադրամի, Երևանի մամուլի ակումբի, Հայաստանյան արդյունաբերողների և գործարարների միության և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի ղեկավարները հունվարի 26-ին հանդիպեցին Հայաստանի արտաքին քաղաքականությամբ զբաղվող պետական այրերի հետ, իսկ մարտի 2-ին ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ծրագրերի ղեկավար Անահիտ Խաչատրյանի հետ քննարկեցին ծրագրի իրականացման առաջին եռամսյակի ձեռքբերումներն ու երկրորդ եռամսյակում իրականացվելիք աշխատանքներին վերաբերող գործնական հարցերը: Ավելի ուշ՝ մարտի 12-ին Կոնսորցիումի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները քննարկեցին բաց դռների ընթացակարգով հայ-թուրքական հարաբերությունների թեմայով հայտարարված դրամաշնորհների հայտերը:

ՄԶՄԿ և «Թուրքական տնտեսական և սոցիալական հետազոտությունների» (ԹՏՍՀ) հիմնադրամի ներկայացուցիչները փետրվարի 4-ին հայ-թուրքական հարաբերությունների մերձեցման ծրագրի շրջանակներում կազմակերպված տեսաժողովի ժամանակ քննարկեցին 2011թ. առաջին կիսամյակի ընթացքում ուրվագծված համագործակցության խնդիրները: Ավելի ուշ՝ մարտի 25-ին ՄԶՄԿ-ն ԹՏՍՀ-ի հետ կազմակերպեց ևս մեկ տեսաժողով՝ քննարկելու Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման քաղաքականության վրա վերլուծական կենտրոնների ազդեցության խնդիրները՝ վերջիններիս կողմից ձևավորած քաղաքական այլընտրանքների միջոցով: Տեսաժողովն իրականացվեց «Աջակցություն Հայաստան-Թուրքիա մերձեցման գործընթացին» ծրագրի շրջանակներում:

Կոնսորցիումի անդամները ՄԶՄԿ և թուրքական TESEV-ի կողմից կազմակերպված հայ-թուրքական խնդիրներին նվիրված տեսաժողովում: Մարտ 2011թ.: Երևան:

Այս երկու տեսաժողովների միջևընկած ժամանակահատվածում, մասնավորապես փետրվարի 24-ին ՄԶՄԿ-ն Երևանում կազմակերպեց ևս մեկ հանրային քննարկում ավելի քան հիսուն մասնագետների և շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Քննարկամ թեման այս անգամ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրներն էին:

*Հանրային քննարկումներ հայ-թուրքական հարաբերությունների շուրջ Թուրքիայում*

«Աջակցություն Հայաստան-Թուրքիա մերձեցման գործընթացին» ծրագրի շրջանակներում ՄԶՄԿ գործընկեր «ԳԱՅԱ» թուրքական վերլուծական կենտրոնը հանրային քննարկումներ կազմակերպեց Թուրքիայում: Քննարկումների առանցքում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների իրավական, գործարար և քաղաքական խնդիրներն էին: Տարբեր պետական գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների և գործարար համայնքի ավելի քան 120 ներկայացուցիչներ են մասնակցել քննարկումների նախապատրաստական աշխատանքներին: Քննարկման մասնակիցները լրացրեցին նաև հատուկ հարցաթերթիկ, որի տվյալներն օգտագործվեցին՝ պարզելու, թե արդյոք տեղի է ունեցել կարծիքի փոփոխություն այդ քննարկումների արդյունքում: Հարցման արդյունքները ԳԱՅԱ-ն ներկայացրել է ՄԶՄԿ փորձագետներին հայաստանյան արդյունքների հետ համադրելու և վերլուծելու նպատակով: Այս համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում քաղաքականություն մշակողներին հասկանալ Հայաստանում և Թուրքիայում շրջանառվող տեսակետներին և երկկող հարաբերությունների առաջնահերթություններին՝ ըստ քաղաքացիների: Միևնույն ժամանակ հարցման միջոցով փորձ է արվել գնահատել հանրային քննարկումների ազդեցությունը մասնակիցների տեսակետների վրա:

## Կարողությունների զարգացում և առաջնորդության խթանում

*Հակամարտությունների փոխակերպման հմտություններ երիտասարդ գործիչների համար*

Տասներկու երիտասարդ գործիչներ Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից փետրվարի 12-13-ը Վանաձորում մասնակցեցին Հանուն խաղաղության եվրոպական հասարակական կազմակերպությունների գործակցության նախաձեռնություններից մեկի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված եվրոպական գործակցության (ԼՂԵԳ) ծրագրի շրջանակներում ՄԶՄԿ կողմից իրականացված վերապատրաստման դասընթացին: Հակամարտությունների կարգավորման ինստիտուտի (ՀԿԻ) հետ համագործակցությամբ կազմակերպված դասընթացի նպատակն էր զարգացնել երիտասարդ մասնակիցների հմտությունները հակամարտության փոխակերպման բնագավառում: Ձեռք բերած հմտությունները երիտասարդները կկիրառեն ի նպաստ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման:

*Իրազեկության բարձրացման հանդիպումներ երիտասարդների հետ*

Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի (AEPLAC/ԱԵՊԼԱԿ) 5-րդ փուլի շրջանակներում ՄԶՄԿ փորձագետները մարտի 16-ից 18-ը Եղեգնաձոր, Իջևան, Վանաձոր և Գյումրի քաղաքներում հանդիպել են երիտասարդների հետ (ՀԿ-ների ներկայացուցիչներ, ուսանողներ և դասախոսներ): Հանդիպումների նպատակն էր Հայաստանի 6 մարզերի 8 քաղաքներում երիտասարդներին ներկայացնել ԵՄ և Հայաստան-ԵՄ հարաբերությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև վերլուծել առկա տեղեկատվական կարիքներն ու բացերը: Այս հանդիպումների և քննարկումների ընթացքում քննարկվեցին ու ներկայացվեցին Հայաստան-ԵՄ հարաբերությունների ներկա ընթացքը և ապագայի հեռանկարները, հարաբերությունների արդյունքում երիտասարդներին ընձեռնված կրթական հնարավորությունները և այլ հարցեր:

*Համաժողով «Մասնակցային եվրոպական ինտեգրում» խորագրով*

2011թ. մարտի 25-ին Քաղաքական և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնը Հայաստանում ԵՄ խորհրդատվական խմբի և Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց համաժողով «Մասնակցային եվրոպական ինտեգրում» խորագրով:

Համաժողովը հարթակ հանդիսացավ Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության համար՝ ապահովելով համագործակցությունը կառավարության, խորհրդարանի և եվրոպական ինտեգրման գործընթացը համակարգող հայաստանյան կառույցների հետ:

Հայաստանի եվրոպական ինտեգրման գործընթացում ներառված են քաղաքացիական հասարակությունը և հանրային կառավարման համակարգը ներկայացնող մի շարք դերակատարներ: Արևելյան գործընկերության շրջանակներում հայ-եվրոպական հարաբերությունների սերտացմանը զուգընթաց արձանագրվում է նաև տարբեր շահագրգիռ կողմերի մասնակցության կայուն աճ: Քաղաքացիական հասարակությունը ներկայացված է եվրոպական ինտեգրման համատեքստում իրականացվող բարեփոխումներին առնչվող որոշումների կայացման գործընթացում թե՛ օրենսդիր և թե՛

ՄԶՄԿ վերապատրաստողները Իջևանի երիտասարդության հետ իրազեկման հանդիպմանը: Փետրվար 2011թ.: Երևան:

գործադիր մակարդակներում: Այնուամենայնիվ, քաղաքացիական հասարակության կառույցների ներկայացուցչական մարմինների գործունեության համակարգումը դեռևս ունի ամրապնդման կարիք: Ավելին, անհրաժեշտ է խթանել երկխոսությունը ոչ միայն քաղաքացիական հասարակության ներսում, այլև համապատասխան պետա-

Ն.Գ. պրն. Ռաուլ դը Լուցենբերգերը ներկայացնում է եվրաինտեգրացման հարցերը ՄԶՄԿ կոնֆերանսում: Մարտ 2011թ.: Երևան:

կան մարմինների և քաղաքացիական հասարակության կառույցնե-ի միջև:

# ՄԶՄԿ-ն մամուլում

Panarmenian.net լրատվականը հրապարակել է «Ղարաբաղյան կարգավորում. եռակողմ հանդիպման արդյունքները» թեմայով Երևան-Մոսկվա հեռուստակամուրջի ընթացքում ՄԶՄԿ գործադիր տնօրեն Թևան Պողոսյանի հայտարարությունն այն մասին, որ եթե ղարաբաղյան հակամարտության գոտում պատերազմ սկսվի, այն նման չի լինի 1990-ականների պատերազմին: Ըստ նրա, ռազմական գործողությունները կծավալվեն ոչ միայն զորքերի շփման գծում, այլև Գանձակում և Բաքվում: Lragir.am-ի հետ հարցազրույցում նա անդրադարձել է Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության ներկա փուլի խնդիրներին, անդամակցության հնարավորություններին ու սպասելիքներին:

Armedia.am-ին տված հարցազրույցում Թևան Պողոսյանը պատմել է Բաքու կատարած իր այցի արդյունքում ստացած տպավորությունների մասին: Նա Բաքվում էր գտնվում փետրվարի 9-11-ը «Քաղաքացիական հասարակության և տեղական իշխանությունների ներգրավումը ԵՄ հետ հարաբերությունների զարգացմանը երկխոսությանը» տարածաշրջանային սեմինարի շրջանակներում:

*Եվրաֆորում Բեռլին 2011*

Euroforum-eastwest.org-ը տեղեկացնում է, որ ՄԶՄԿ վեց երիտասարդ ներկայացուցիչներ փետրվարի 25-ից մարտի 6-ը մասնակցեցին Բեռլինում կայացած Եվրաֆորում Արևելք/Արևմուտք ծրագրի թվով 7-րդ հանդիպմանը: Ծրագիրը ֆինանսավորում է ԵՄ «Երիտասարդությունը գործողության մեջ» ծրագրի կողմից:

*Հանդիպում ԵԽԽՎ համազեկուցողների հետ*

News.am էլեկտրոնային լրատուն և Ազատություն ռադիոկայանը տեղեկացնում են, որ ԵԽԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողներ Ջոն Պրեսկոտը (Միացյալ Թագավորություն) և Աքսել Ֆիշերը (Գերմանիա) Երևան կատարած փաստահավաք այցի շրջանակներում հանդիպել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: ՄԶՄԿ ներկայացուցիչ Վահան Ասատրյանը մարտի 16-ին համազեկուցողներին ներկայացրեց վերջին տարիներին Հայաստանում տեղի ունեցած սոցիալական և քաղաքական փոխակերպումները, ինչպես նաև հայ հասարակության վերաբերմունքը, սպասելիքները և ընկալումները փոփոխությունների դինամիկայի նկատմամբ:

*ՄԶՄԿ գործադիր տնօրենը ԱԳ ՔՀՖ համակարգող խմբի հանդիպմանը*

Փետրվարի 1-3-ը ՄԶՄԿ գործադիր տնօրենը Բրյուսելում մասնակցել է Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի համակարգող խմբի հանդիպմանը, որպես ՔՀՖ Աշխատանքային 4-րդ խմբի համակարգող: Հանդիպման ընթացքում քննարկվել են առաջիկա ծրագրերի ռազմավարությունը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել նախորդ տարվա հաջողություններին և բացթողումներին: Ֆորումի շրջանակներում Թևան Պողոսյանը փետրվարի 1-ին հանդիպել է տարածքային կոմիտեի նախագահ տկն. Մերսեդես Բրեսսոյի, իսկ փետրվարի 3-ին՝ Հանձնաժողովի անդամ պրն. Ստեֆան Ֆուելի հետ:

## ՄԶՄԿ-ի մասին՝մանրամասն

2000թ. մարտին հիմնադրված Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը (ՄԶՄԿ) Հարավային Կովկասի առաջատար վերլուծական կենտրոն է, որը համախմբել է հանրային և մասնավոր հատվածներում խոր ակադեմիական գիտելիքներ և աշխատանքային հարուստ փորձ ունեցող բարձրակարգ վերլուծաբանների և հետազոտողների: Մեզ միավորում են ընդհանուր արժեքները, նվիրվածությունը մասնագիտական գերազանցության և էթիկայի բարձր սկզբունքներին: Մենք սերմանում/զարգացնում ենք քաղաքականության մշակման ու իրականացման մասնակցային գործընթացը, մշակում և ներդնում տարածաշրջանային, ազգային և տեղական քաղաքականության նորարարական արդյունավետ գործիքներ ու մեթոդներ:

Մեր շահառուներին, այդ թվում՝ պետական կառավարման մարմիններին, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կառույցներին և զարգացման գործընկերներին ՄԶՄԿ-ն տրամադրում է որակյալ խորհրդատվություն, քաղաքականության վերլուծության և զարգացման/մշակման ծառայություններ: Կենտրոնը ստեղծում է նաև քաղաքականության ներկայացման/հաղորդակցության նորարարական գործիքներ և ձևավորում երկխոսության համար նպաստավոր միջավայր: Կենտրոնը երկրում և տարածաշրջանում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների մասնակցության նոր արդյունավետ տեխնոլոգիաների մշակման և ներդրման առաջամարտիկն է: Առաջին անգամ 2004թ. ներդրված մեթոդները շարունակականորեն կատարելագործվել և վերածվել են երրորդ սերնդի գործիքների: Իր տասնամյա գործունեության ընթացքում ՄԶՄԿ-ն դարձել է գիտելիքի և գերազանցության լավագույն կենտրոններից մեկը՝ ճանաչվելով որպես հուսալի և ցանկալի գործընկեր ինչպես մեր տարածաշրջանում, այնպես էլ ողջ աշխարհում:

**Էլ. փոստ՝** mail@ichd.org
**Հեռ.՝** +374 (10) 582638, +374 (10) 528321;
**Ֆաքս՝** +374 (10) 527082
**Հասցե՝** Երևան 0001, Սայաթ Նովա 19
«Անի Պլազա» բիզնես կենտրոն

**Դիտեք մեզ այստեղ՝** vimeo
www.vimeo.com/ichd

**Հետևեք մեզ այստեղ՝** twitter
http://twitter.com/ICHDthinktank

**Միացեք մեզ այստեղ՝** facebook
http://groups.to/ichd-thinktank

**Այցելեք մեզ այստեղ՝ www.ICHD.org**

**© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն**
ՄԶՄԿ Լրատուի տպագիր տարբերակը կարող եք ձեռք բերել ՄԶՄԿ գրասենյակում
ԿՐՃԱՏԵ՛ՆՔ ԹՂԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
Մտածիր կանաչ